

յարած Ռամկաւանդական յիշատակներու, եթէ չեմ սխալիր, պէտք էր կարեորութիւն մ'ունենալ, ինչպէս որ մեկնութիւն մը՝ որ համառօտիւ կ'երկրորդէ աւանդական այլևայլ գաղափարներ, նկատմամբ այլաբանական իմաստին անձրևի, ձիւնի և սառոյցի. այս հայեցակէտով ևս օգտակար է՝ ինչ որ յիշատակուեցաւ իպլիս հրեշտակապետին պատճոց վրայ:

Բայց, կը հասկցուի, միակ ճշմարիտ արևելեան աղբիւր որ ուղղած՝ է գՏանդէ՝ Աստուածաշունչ Գիրքն է իր մեկնութիւններով:

ՏՕԳԻ. ԱՄՏ ԵՄԱՆԱԿ

Ուսուցչ. Յոյն և Լատին լեզուաց

« Foscarini » Թագ. Լիւիւնի

Վեներաբլ 19 Հոկտ. 1921

Թրգմ. Հ. Ե. ՍԻՐՈՆՆ.

1. Կ'ըսեմ ուղղած, վասն զի գաղափարներու և աւանդութեանց մեծ հոսանքներն՝ որ բացուեցան Խաչակիրներու և վաճառականութեանց ձեռքով՝ անվերջ էրենց բաժինն ունեցան Միլիէն գաղու շրջանին մէջ: Կ'ըսեմ արեւելեան, վասն զի իր ժամանակին բնագիտութիւնն ալ, իրաւունք կու տար Տանդէի, որ Սասանի երկրի կեդրոնը զնէր: Եւ նոյնպէս ըստ Փիլիպպոս Վիլլաւանիի՝ սասակագոյն ցուրտ առաջ եկած է կրակի գօտիէն ունեցած սաստիկ հետաւորութենէ: Եւ մասնաւորապէս դիտուած է (Civ. Catt. 1910 - Արտահակին երեք գոյները) որ ոչ պատահաբար Տանդէի յղացումը, որով Սասանան «չարժեշով վեց քեները կը ստեղծէ ամբողջ կոկիտոսը» կը համաձայնի իտրուրդական բացատրութեան Ուլո աս Ս. Գարոյի առեւած Աստուածաշունչի մի ցանի հատուածներուն, պատշաճեցնելով Սասանին՝ ինչ որ ըսուած է Հիւսիսային հովին նկատմամբ, որ ցուրտ հով մ'է որ Շուրը կը ստեղծէ և վաճառի պէս սառոյցով կը շրջափակուի: Ուրիշ մանրամասնութիւն մ'ալ զիտողութեան անուած է ճարտարմտութեամբ ուրիշ յօդուածի մը մէջ «Մանմետակոն վերջաբանութիւն Աստուածային կատակերգութեան մէջ» (Civiltà Cattolica. 5 Յունիս 1920. էջ 409), որ, այսինքն խօսքը «կրճեղ ստամանց», զոր շատ անգամ կը տեսնենք Աւետարանին մէջ, և զոր կը մեկնեն Ագուիանցիին և ուրիշները իբր ցուրտ և սառոյց, կը գտնէ իր բազմաթիւնը աս տողերուն մէջ:

Այն ցաւազին ըստուրք ստոին մէջ սուղուած, կարապին պէս կափկափելով ակոսանի:

(Գմ. ԼԲ. 35-36)

ԼԵԶՈՒԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԿԻՒՐԴԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻՈՑ

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԾԱՅՈՒԹԵԱՆ

Ա.

Էջ 1. տող 8. Զի՛ եթէ ի վերայ միոյ մեղաւորի զղջացելոյ ուրախութիւն եղև յերկինս, ըստ բանի աւետարանին, ո՞րչափ ևս առաւել այդչափ ոգւոց ուրախութիւն լիցի երկնաւորաց և երկրաւորաց առ հասարակ:

Ուղղ. - այդչափ ոգւոց փրկութիւն: Եթէ ի վերայ միոյ մեղաւորի, կ'ուրախանայ երկինքը, որչափ ևս առաւել ի վերայ փրկութեան այդչափ հոգւոց, որք մկրտութեան կնիքը պիտի առնուն:

Բ.

Էջ 1. տող 10. Զրարեաց ճանապարհաց և զգեղեցիկ շաւղաց բուն հարեալ, երկիրաճութեամբ և խոնարհութեամբ զընթացս ընթացարուք: Զի՛ մկրտցն իսկ ի փրկութիւն եկեալ հասեալ պատրաստեալ կայ միածին Որդին Աստուծոյ:

Ուղղ. - Յոյնն. Զի՛ ձեր իսկ ի փրկութիւն ևն:

Գ.

Էջ 2. տող 8. « Լուացարուք, սրբեցարուք ի բաց թօթափեցէք զչարիս յանձանց ձերոց առաջի աչաց իմոց ասէ տէր » . զի գճեք հրեշտակական բարբապոքն պատեցնէ, զի իսպէ. « Երանի որում թողութիւն եղև մեղաց, և որոց ծածկեցան յանցանք նորա »:

Ուղղ. - Զի՛ գճեք հրեշտակական բարբապոքն պատուեսցնէ (acclamer):

Դ.

Էջ 3. տող 8. Ձի որք դեռ խստու-
թեամբ և թխութեամբ զգածեալ են,
նորա ի ձախակող կուսէ անտի մակաղեալ
կան:

Ուղղ. — Թխութեամբ մեղացն զգածեալ
են: Երկնից օթեանը մտնելու համար հար-
կաւոր է գրաւական ունենալ զՀոգին սուրբ,
խորհրդական զրոշմն. զի վերստին ծնունդն՝
ի ջրոյ և հոգւոյ է: Պատրաստուած յա-
ւիտենական կեանքը ընդունելու համար
հարկաւոր է մեղաց չարութիւնը և սևու-
թիւնը քաւել, ապա թէ ոչ ձախակողմեան
դասը կը դատուին: Կարելի է զեղջման
կանոնով իմանալ մեղացն, սակայն լաւ է
բացայայտն:

Ե.

Էջ 3. տող 15. Ձի մարմինը սերմա-
կեայք ծննդեամբքս ծնանին, իսկ հոգիքն
հաւատովք վերստին նորոգին:

Ուղղ. — Ձի մարմինը՝ տեսանելի (զգա-
յական) ծննդեամբքս ծնանին: Համե-
մատութիւն մ'է մարմնաւոր և հոգեւոր
ծննդեան, ասել ուզելով թէ մկրտութեամբ
ոչ մարմինն այլ հոգին վերստին կը ծնանի:
Վասն զի մարմինը, բնական օրէնքով
սաղմնատութեամբ կը ծնանի, մինչ հոգին
աւազանին ջրով:

Զ.

Էջ 6. տող 1. Չայնչափ բոլորեալ թիւս
տարերց տարեկանաց անցեր՝ զաշխարհաւ
զուր տարապարտաց զբաղեալ:

Ուղղ. — Չայնչափ բոլորեալ թիւ տա-
րեաց տարեկանաց անցոցեր: Ոչ միայն
շատ տարիներ՝ այլ և շատ տոնական օրեր
անցուցիւր զուր ումպէտ ժամանակը կոր-
սընցուցեր ասել կամի Ս. Հայրն:

Է.

Էջ 6. տող 11. Չղջալից սրտիւ քո

սրբեա զանդամդ, զի բազմազոյն շնորհս
ընդունել մարթասացես:

Ուղղ. ըստ Յունին. — Զամանդ. զղջու-
մով հարկ է սրբել սրտի ամանը, շնորհք
ընդունելու համար: «Պատրաստեցէք զա-
մանս անձանց ձերոց ի սրբութիւն անխիղճ
հաւատով»: (էջ 30 տող 13):

Ը.

Էջ 10. տող 4. Չար չար են, որպէս
ասացաւ մեղք յար եւ, այլ ո՛չ եթէ առանց
բժշկութեան են:

Ուղղ. — Աւելորդ կրկնուած «չար են»:

Թ.

Էջ 12. տող 1. Է՛ է՛ առաջնորդ մեղաց
բանասարկուն, և ծնիչ չարեաց, զի զայս
ինքնին տէր մեր Յիսուս ասաց, և ոչ ես.
«Ձի ի սկզբանէ բանասարկուն ասաց մե-
ղանչէ». զի յառաջ քան զնա մեղաւ և
ոչ ոք: Բայց մեղաւ ո՛չ եթէ ի ծննդենէ
բուսոյ բարուցն, ի հարկէ բարձեալ բերէր
յանձին՝ ակամայ առեալ զմեղանսն. ա-
պա թէ ոչ յարարիչն ընթանան պատճառք
Պատուցն, եթէ նա այսպէս արար:

Ուղղ. — Կիտազրութիւնք. Հեղինակս
կ'ուզէ հաւատել թէ սատանան բնութեամբ
բարի ստեղծուեցաւ, և մեղանչած ժամա-
նակ ոչ մի հարկի կամ բռնութեան տակ
էր, այլ անձնիշխան և ազատ կամքով
չարը իմացաւ և մեղանչեց: Արդ եթէ
սպագրի կիտազրութեանց հետեինք, Ս.
Հօր խօսքերն հակառակ արդիւնք կու տան.
ուստի կը համարիմ վերականգնել իմաստն
կէտերու փոփոխութեամբ: Բայց մեղաւ,
ո՛չ եթէ ի ծննդենէ բուսոյ բարուցն, (կամ)
ի հարկէ բարձեալ բերէր յանձին (զչա-
րութիւն), ակամայ առեալ զմեղանսն.
ապա թէ ոչ յարարիչն» և այլն: .

Ժ.

«Այլ բոյս բարուց վաղվաղակի ընդունի
զցրտարիտեն, բայց խնդիր է մտաց յօժա-
րութեանն»:

Ուղղ. — Ընդունի զգիրկութիւն, ընդ յոյսին:

ԺԱ.

Էջ 15. տող 10. « Հանել եհան զնա (Աղամ) ի դրախտէ անտի, զի բնակել նմա անդէն ի նմին անարժան էր վասն մեղացն, և բնակեցուցանէ արտաքոյ դրախտին՝ ընդդէմ դրախտին. զի տեսանելով տեսցէ ուստի՝ անկաւն, և յորմէ՛ պատուոյ յինչն կործանեցաւն կարօտասցի և միտ զիցէ ապաշխարութեան, զի ակոյկն ի նոյն կոչմամբ արժանի լիցի դառնալոյն »:

Ուղղ. — զի անդրէն ի նոյն զղմամբ՝ ըստ յոյճին՝ արժանի լիցի դառնալոյն: Աղամ դրախտէն արտաքսուեցաւ մեղաց համար. հոգևոր վերադարձը ի նոյն՝ միայն զղջումով կարելի էր և ոչ կոչմամբ, որ արժանաւորութիւն մը նախապէս ենթադրել կու տայ: Նոյնպէս ընդօրինակողի վրիպակ պէտք է համարել դրախտին կըրկնութիւնը. վասն զի վերն սասէ. « եհան զնա ի դրախտէ անտի, որով՝ վերջինս լինելու է. « և բնակեցուցանէ արտաքոյ՝ ընդդէմ դրախտին » կամ պարզապէս արտաքոյ դրախտին:

ԺԲ.

Էջ 19. տող 6. « Տեսանեն զթագաւորին խոնարհութիւնն. տեսանեն զարքային խոստովանութիւնն. միթէ՛ յանդիմանութեամբ կշտամբեաց զնա. միթէ՛ բազո՞ւմցոյք էին, որ զիտակը էին զործոյն »:

Ուղղ. — միթէ՛ բազո՞ւմց էին, որ զիտակը էին զործոյն:

ԺԳ.

Էջ 19. տող 10. « Արագ արագ իրքն կատարեցան, և անդէն վաղվաղակի մարգարէն հասանէր ամբաստանող, և որ ի պարտութիւն մատնեալ էր, խոստովան լինէր զչարեացն: Բայց զի մտադիր քարերարտարեամբն խոստովան լինէր, արագ արագ բժշկութիւն գտանէր »:

Ուղղ. Բայց զի մտադիր քարտրեամբն

խոստովան լինէր. — Մեղաւորի զղջումն հետևանք է սրտի բարութեան, որ բարի երկրի պէս կ'ընդունի շնորհաց ներգործութիւնը. իսկ չարասիրտն որպէս Սաուղ, ապառաժի պէս, յորդառատ անձրևէ զկնի կը մնայ միշտ չոր և ցամաք: Դասիթ մարգարէն բարի և հեզ էր սրտով, մեղացը թողութիւնն Աստուծոյ քարերարտարեակն ընդունեցաւ:

ԺԴ.

Էջ 21. տող 7. « Արդ տեսեր, զինչ ասաց մարդասէր Աստուած ցեղիս. « Տես սեր ասէ, զիմարդ զղջացաւ, զամօթի հարաւ աքայար յերեսաց իմոց՝ իբրև զայս իմն, ջանայր հանել զեռանդնոտ միտս մարգարէին, զիջանել ներել ապաշխարողին. « Ոչ ածից զչարիս յաւուրս նորա », ասէ: Արդ թէպէտ և յետ ներդարեանն ո՛չ կայր ի բաց ի չարութենէ անտի, սակայն թողութիւն առնէր՝ որ թողլոցն էր »:

Ուղղ. — Արդ թէպէտ և յետ ներողութեանն կամ քողարեանն, Ասել կամի թէ Աստուած գիտնալով որ Աքայար, զղջալով հանդերձ, իւր չարութենէն ետ պիտի չկանգնէր, սակայն առ ժամն ներեց ճշմարտապէս անոր անօրէնութեանց, որովհետև զղջացաւ և զամօթի հարաւ:

ԺԵ.

Էջ 25. տող 3. « Ո՛չ իցէ լուեալ քո, զի զաչս թագաւորացն եհան. նախ առաջի նոցա զորդիս նոցա ի բերան փողոտեաց: Ո՛չ է լուեալ քո, զի զգրովբէն յափշտակեաց. ո՛չ զայն ասեմ, հոգևորը երկնաւորը են, այլ զայն՝ որ ի ներքս ի տաճարի անդ արարեալ զնէին, որ ի վերայ քաւութեան տապանակին եղեալ կային... Այս նարուզողոնոսոր զվարագոյր սրբոցն պատահաց, զսեղանն կործանեաց »:

Ուղղ. զորդիս նոցա ի բերան սրոյ փողոտեաց... ոչ զայն ասեմ, որ հոգևորը երկնաւորը են... զվարագոյր Սիրտրեան սրբոցն պատահաց:

(Շարունակելի) Է. ԳԱՐ. ՆԱԿՊԵՏԵԱՆ